# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար
համայնք, ՀՀ, Լոռու մարզ, Գ.Գեղասար, Հեռ. 025560412,
094041458 , geghasar.lori@mta.gov.am

N 12
*17 հունվար 2018թ.*

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ**

Կից ուղարկվում է Գեղասար համայնքի ավագանու թիվ 3-Ա և 4-Ա որոշումները:

Առդիր՝ 3 թերթ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍՏԱՍԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ս. Մերոբյան*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Գեղասար համայնք, հասցե գ.Գեղասար,
հեռ.025560412 էլ. փոստ՝ geghasar.lori@mta.gov.am

**ՈՐՈՇՈՒՄ**

«16» հունվարի 2018 թվական, թիվ 3-Ա

### ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 20-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Գեղասար համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.
2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ՝ | Կողմ՝ /4/ | Դեմ՝ /0/ | Ձեռնպահ՝ /0/ |
|---|---|---|---|
| Հովհաննիսյան Արկադի | | | |
| Մկրտչյան Քրիստինե | | | |
| Նահապետյան Աննա | | | |
| Սիմոնյան Վրեժ | | | |
| | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ____________ Ս.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կ.Տ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Գեղասար համայնքի ավագանու
2018 թվականի հունվարի 16--ի N 3-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Նազարյան Անանիկ Բաղդասարի - տաս հազար դրամ , երեխայի ծննդյան գումար,
3. Հովհաննիսյան Քերոբ Սերյոժայի – քսանհինգ հազար դրամ, սոց օգնություն,
4. Վարդանյան Մաքսիմ Շիրակի – քսանհինգ հազար դրամ, սոց օգնություն:

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ________________ Ս.ՍԵՐՈԲՅԱՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՍԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ *06800971*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնք

ՀՀ, Լոռու մարզ, գ.Գեղասար, 025560412 , 094041458, geghasar.lori@mta.gov.am


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հունվարի 2018թվականի N 4-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, ՀՀ Կառավարության 12.04.2001թվականի , թիվ 286-Ն որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը, համայնքի ավագանին որոշում է .

1. Տալ համաձայնություն Գեղասար համայնքի 2-րդ փողոց, թիվ 5 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 06-028-0005-0003 ծածկագրով 0.08 հա ջրային ֆոնդի հողերից ձկնաբուծարան կառուցելու նպատակով կառուցապատման իրավունքով 25 տարի ժամկետով տրամադրելուն:

2. Կառուցապատման իրավունքի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 3000 ՀՀ դրամ, մրցույթի մասնակցության վճարը 1000 ՀՀ դրամ, քայլի չափը 500 ՀՀ դրամ, կանխավճարը մեկնարկային գնի 5%-ի չափով:

3. Համայնքի ղեկավար Ս. Հովհաննիսյանին ապահովել կառուցապատման իրավունքով տրամադրվող հողամասի հայտարարության հրապարակային ծանուցումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ

2.ՄԿՐՏՉՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

3.ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՆՆԱ

4.ՍԻՄՈՆՅԱՆ ՎՐԵԺ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՍՏԱՍԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**